ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 854-Ա/2 «08» հուլիսի 2023 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի N 2220-Ա/2 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ ու 34-րդ հոդվածների, «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի «ա» կետի՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022 թվականի դեկտեմբերի 1-ի ««Հայաստանի Հանրապետության Վարչապետի գավաթ» լողի սիրողական մրցաշարի կանոնակարգը և մասնակցության հայտի օրինակելի ձևը հաստատելու մասին» N 2220-Ա/2 հրամանի հավելված N 1-ի 5-րդ կետում «Մրցաշարը կանցկացվի 2023 թվականի հուլիսի 3-րդ տասնօրյակում, Սևանա լճում, ՀՀ Գեղարքունիքի մարզի Շորժա համայնքի հարակից լողափնյա տարածքում» բառերը փոխարինել «Մրցաշարը կանցկացվի 2023 թվականի օգոստոսի 12-ին, ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի Շողակաթ բնակավայրի (նախկին Շորժա) Սևանա լճի լողափնյա տարածքում» բառերով:

Восстановимая подпись

ԱՐԱՅԻԿ ԽԶՄԱԼՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐ՝ Подписано: KHZMALYAN ARAYIK3101800129 Ա. ԽԶՄԱԼՅԱՆ

(պարտականությունները կատարող)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 753-Ա/2 «24» 05 2023 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 01-Ի N 2220-Ա/2 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ ու 34-րդ հոդվածների և 36-րդ հոդվածի 6-րդ մասի, «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի «ա» կետի՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022 թվականի դեկտեմբերի 01-ի «Հայաստանի Հանրապետության Վարչապետի գավաթ» լողի սիրողական մրցաշարի կանոնակարգը և մասնակցության հայտի օրինակելի ձևը հաստատելու մասին» N 2220-Ա/2 հրամանի հավելված N 1-ում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) 6-րդ կետից հանել «գործող պրոֆեսիոնալ մարզիկները՝ առանձին խմբով» բառերը,

2) 7-րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ՝ «Մրցաշարին չեն կարող մասնակցել այն մարզիկները, որոնց անունները ներառված են ՀՀ լողի վարկանիշային աղյուսակում (ռեյտինգ), կամ վերջին հինգ տարիների ընթացքում մասնակցել են լողի Հայաստանի Հանրապետության առաջնություններին, կամ միջազգային մրցաշարերին»,

3) 9-րդ, 10-րդ և 13-րդ կետերից հանել «և գործող պրոֆեսիոնալ» բառերը,

4) 9-րդ կետի 3-րդ ենթակետը ուժը կորցրած ճանաչել:

Восстановимая подпись

ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐ՝ Подписано: ANDREASYAN ZHANNA 6402810169 **Ժ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**